ՍԱՄՍՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԴԵՍՊԱՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

ԲՈԼՇԵՎԻԿԵԱՆ ԴԱՒԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ

1920 թուի սկիզբը Պարսկաստանում ընդհանուր համոզում էր տիրում, որ թիւրք – ադրբէջանեան դաւերը Նախիջեւանի շրջանում կը ճնշուին եւ շուտով կը վերականգնուի երկաթուղային հաղորդակցութիւնը, հետեւաբար եւ փոստ – հեռագրական ու առեւտրական յարաբերութիւնները Հայաստանի եւ Պարսկաստանի միջեւ: Արդուբեանը զբաղուած էր առեւտրական համաձայնութեան նախապատրաստութեամբ: Այդ նպատակով նա 1920 թ. մարտ 24–ին, դեսպանատանը առեւտրական գործին լաւատեղեակ անձնաւորութիւններից մի խորհրդակցութիւն հրաւիրեց, որին մասնակցեցին մի շարք յայտնի վաճառականներ, ինչպէս Զիբրայէլ Բուղաղեանը, Ալեքսան խան Թունեանը: Այդտեղ մշակուեցին այն հիմունքները, որոնցով պիտի սկսուէին հայ – պարսկական առեւտրական յարաբերութիւնները:

Մինչ հայկական դեսպանը այսպէս խաղաղ աշխատանքի էր նըւիրուում, անդին տեղի էին ունենում դէպքեր, որոնք հիմնովին պիտի յեղաշրջէին դրութիւնը: Ապրիլ 28–ին բոլշեւիկները գրաւեցին Բաղուն, եւ Ադրբէջանը յայտարարուեց խորհրդային: Քիչ յետոյ, բոլշեւիկեան նաւերը երեւացին Էնզելիի առջեւ եւ սկսեցին ռմբակոծել Ղազեան թաղամասը: Ժողովուրդը սարսափահար դիմեց փախուստի դէպի Ռնշտ: Անգլիական հրամանատարութիւնն ու պարսիկ կառավարութիւնը, յանկարծակիի եկած, դիմադրութիւն ցոյց չտըւին: Կենտրոնից ստացուած հրահանգի համաձայն Ռէշտի նահանգապետը, Էնզելիի անգլիական հրամանատարի ներկայացուցիչի հետ միասին, սպիտակ դրօշակ պարզած, նաւակով գնում են բոլշեւիկեան ուժերի հրամանատար Ուկաւչինի մօտ, որ յայտնում է, թէ իրենք ոչինչ չունեն անգլիացիների ու պարսիկների դէմ եւ միայն պահանջում են Դէնիկինեան նաւերը, ռազմամթերքը, զինուորական

A.R.A.R.@

ուժերն ու փախստականներին։ Ցայտնում է նոյնպէս, որ մի հեծելազօրի ջոկատ ափ է իջել պարսից Աստարայում եւ մի հետեւակ զօրամաս էլ շարժւում է դէպի Արտաբիլ. այս վերջին զօրամասը, սակայն, յետ պիտի կանչւի։

Բանակցութեան հետեւանքով անգլիական զօրքերը քաշւում են Ռէշտ, իսկ բոլշեւիկները համաձայնում են կնքել զինադադար, բայց, հակառակ դրան, ափ են իջնում Էնզելիից հինգ կիլոմետր դէպի արեւելք։ Անգլիական հրամանատար Շամպան շտապում է ուժեր ուղարկել նրանց դէմ. Ղազեանի եւ Ռէշտի ճանապարհին մի թեթեւ ընդհարում է տեղի ունենում, եւ անգլիացիները նորից քաշւում են Ռէշտ. բոլշեւիկները գրաւում են Էնզելին, ձեռք են գնում Դէնիկինեան նաւերի, ռազմամթերքի ու փախստականների վրա եւ թռուցիկներ ցրելով՝ սկսում են բոլշեւիկեան գաղափարներ տարածել ժողովրդի մէջ։ Անգլիացիք ամրանալով Ռէշտում՝ բաւականանում են միայն օդային հետախուզութիւններ կատարելով եւ գործօն քայլերի չեն դիմում։

Բոլշեւիկների այս յարձակողական դիրքը ահագին յուզում եւ իրարանցում առաջ բերեց ժողովրդի մէջ, նոյն իսկ մայրաքաղաքում, այնպէս որ վարչապետ Վըսուղ – Դովլէն ստիպւած եղաւ մի պաշտօնական հաղորդագրութեամբ հանդարտացնել հանրային խռոված մտքերը եւ յայտնել, թէ կառավարութիւնը բանակցութեան մէջ է, որ, յոյս ունի, կը պսակւի յաջողութեամբ։ Եւ, յիրաւի, շուտով բոլշեւիկների եւ պարսիկների միջեւ կնքւեց համաձայնութիւն, եւ բոլշեւիկները հեռացան՝ տանելով իրենց հետ գրաւած աւարը։*)

Այս դէպքերը, բնականաբար, չէին կարող չյուզել հայկական շրջանները։ Ց. Արղութեանը օրը օրին տեղեկութիւններ էր ստանում դէպքերի վայրից, Հ. Ց. Դ. մարմինների միջոցով եւ աշխատում էր հասցնել Երեւան։ Հայկական շրջաններում մեծ իրարանցում եւ վիշտ պատճառեց, մանաւանդ, մայիսեան ապստամբութեան լուրը Հայաստանում, բայց շուտով Երեւանից ստացւեց պաշ-

*) Աւելորդ չենք համարում յիշել, որ դեռ Բագուի գրաւումից առաջ Թեհրան եկաւ բոլշեւիկեան մի առաքելութիւն Յովսէփ Ղարախանեանի գլխաւորութեամբ։ Թիչ յետոյ, Ղարախանեանը ձերբակալւեց եւ աքսորւեց Բաղդադ։ Ապա Մոսկւայի կողմից եկաւ Ղազինի ցարական հիւպատոս Բրաւինը, բայց ցարական դեսպանը մերժեց նրան ճանաչել եւ տեղ տալ դեսպանատանը։ Պարսիկ կառավարութիւնը չմիջամտեց եւ Բրաւինը կարճ ժամանակ մնալով Թեհրանում՝ հեռացաւ։

տօնական հաւաստիացում, որ բոլշեւիկեան ապստամբութիւնը ճընշուած է եւ հանրապետական կառավարութեան դիրքը ամուր է: Այս լուրը ընդունուեց արտակարգ ցնծութեամբ: Այդ առթիւ, Մայիս 28-ին, Հայաստանի անկախութեան տարեդարձի օրը, տեղի ունեցան եկեղեցական մաղթանք, համաժողովրդական հանդէսներ եւ պաշտօնական ընդունելութիւն դեսպանատանը: Վարչապետ Վրսուղ-Դովլէն անձամբ եկաւ հայոց դեսպանատուն շնորհաւորելու Հայաստանի ազատութիւնը: Այցելեցին նաեւ արտաքին գործոց նախարարը իր օգնականի հետ, ներքին գործոց եւ այլ նախարարներ, բարձրաստիճան պաշտօնեաներ եւ օտար դիւանագիտական ներկայացուցիչները իրենց գործակիցներով: Սա մի բացառիկ ուշադրութեան ցոյց էր դէպի իր անկախութեան համար պայքարող Հայաստանը, որոշ չափով նաեւ յարգանքի արտայայտութիւն Իշխանի անձի վերաբերմամբ· իր վայելուչ արտաքինով, քաղցր բնաւորութեամբ եւ խմաստուն վարուելակերպով Իշխանը վաստակել էր ամենքի համակրանքը: Եթէ Հայաստանը մնար անկախ, նա պիտի դառնար Թեհրանի դեսպանական կազմի աւագը (doyen):

Նոյն օրը ժողովրդական մեծ խրախճանքներ, կեր ու խում եւ ուրախութիւն տեղի ունեցան եւ Հայկական Ակումբում, որ չքեղօրէն զարդարուած էր ծաղիկներով, դորգերով եւ ազգային դրօշակներով: Եռագոյն դրօշակներով պճնուած էին եւ բոլոր հանդիսականները, մեծ ու փոքր, որոնք մինչեւ լոյս ուրախացան: Քաղաքացի ու զինուորի խառնուած էին իրար: Զինուորական նուագախումբը, թառը ու քեամանչան, դաւուլ-զուռնան մրցում էին միմեանց հետ: Երգերն ու ճառերը վերջ չունէին: Իշխանն ու իր շքախումբը անընպառ աղբիւր էին ոգեւորութեան եւ բուռն ցոյցերի: Անկարելի է առանց յուզումի վերյիշել այդ օրւայ ժողովրդական ցնծութիւնը:

Նման հանդէսներ եւ ուրախութիւններ տեղի ունեցան եւ հայաբնակ բոլոր վայրերում:

Պարսիկ կառավարութեան Հայաստանի եւ նրա ներկայացուցիչի հանդէպ տածած բարեկամական զգացմունքի մէկ արտայայտութիւն էլ եղաւ Իշխանի համակրական ընդունելութիւնը Իրանի արքունական պալատում, ուր Շահի Եւրոպայից վերադառնալուն եւ թագադրութեան տարեդարձի առթիւ հանդէս էր նշանակուած: Ներկայ էին նախարարները, բարձրաստիճան պաշտօնեաներն ու դիւանագիտական ներկայացուցիչները: Պալատի դրան առաջ Հայաստանի դեսպանը ընդունուեց բացառիկ պատիւներով· զինուորական նուագախումբը նուագեց «Մեր Հայրենիք»-ը: Դիւանագիտական խնջոյքի միջոցին, երբ բաժակ էր բարձրացուում Հայաստանի Հանրապետու-

A.R.A.R.@

թեան ի պատիւ, նուագախումբը նորից նուագեց հայկական ազգային երգը: Շահինշահի պալատի կամարների տակ, պարսիկ արքունական նուագախմբի կողմից հայոց ազգային երգի նուագ, առաջին անգամը տասնեակ դարերից ի վեր – կարելի՞ էր չյուզել ու չփառաւորուել:

XI

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՍԿՈՒ ՖՈՆԴ

1920 թ. ամառուայ ամիսները Իշխանը անցկացրեց ամառանոցում: Մայրաքաղաք լինելուց յետոյ նրա առաջին հոգսը եղաւ կազմակերպել «փոխառութեան» եւ «Ոսկու Ֆոնդ»-ի գործը: Մի շարք խորհրդակցութիւնների մէջ ստեղծուեց կենտրոնական մարմին, որ պիտի ղեկավարէր ընդհանուր պարսկահայութեան փոխառութեան գործը: Կազմուեց նաեւ տիկիններից եւ օրիորդներից «Ոսկու Ֆոնդի» յանձնախումբ, Տիկ. Սաթ. Արղութեանի նախագահութեամբ, որ փոխառութիւնից անկախ ոսկի պիտի հաւաքէր Հայաստանի ոսկու պետական Ֆոնդին նպաստելու համար: Նշանակուեց նաեւ պրոպագանդի յանձնախումբ, (դր. Յ. Ստեփանեան, Հ. Սագինեան, Ռ. Մովսէսեան, Գ. Իփէկեան, Յ. Թովմասեան, Ս. Յովհաննիսեան, Հ. Գարագաշ), որ դասախօսութիւններով, թռուցիկներով եւ ուրիշ համապատասխան միջոցներով պիտի ժողովրդականացնէր փոխառութեան եւ «Ոսկու Ֆոնդ»-ի գաղափարը: «Անկախութեան փոխառութեան Կենտրոնական Մարմնի» Դիւանը կազմուեց հետեւեալ անձերից. նախագահ՝ Ալ. Խան Թունեան, փոխ-նախագահներ՝ Ռուբ. Թումանեան, Աւ. Տէր-Գրիգորեան, Գանձապահ՝ Գառն Էնշերեան, քարտուղարներ՝ Արս. Մարգարեան, Արամ Մովսէս:

«Ոսկու Ֆոնդ»-ի հանդանակութիւնը Թեհրանում սկսուեց նոյ. 21-ին, հրապարակային մի հանդէսով: Խուռն բազմութիւն էր լեցուած Հայ Ակումբի սրահը: Հանդէսի գրական – երաժշտական բաժնից յետոյ, բացուեց հանդանակութիւնը, որ վարում էր կանանց յանձնախումբը: Յանձնախումբի անդամուհիները շրջապատել էին մեծ սեղանը, որի վրա դրուած էին մի արկղ եւ մի քանի ժապաւինեալ եւ կնքուած մատեաններ: Նուիրատուները երկիւղածութեամբ մօտենում էին սեղանին ու նշանակում էին իրենց անունն ու նուիրաբերած ոսկէ իրը եղած բոլոր ծանօթութիւններով:

Պէտք էր տեսնել, թէ ինչ ոգեւորութիւն էր համակել բոլոր ներկաներին, ինչպիսի բարձր գիտակցութիւն եւ զոհողութեան անձնման ոգի երեւան բերեց հայ կինը: Հինգերորդ դարն էր, կարծես,

վերակենդանացած: Հայ կինը պոկում էր իր վրայից Թանգագին իրերը եւ դնում հայրենիքի սուրբ սեղանի վրա: Երկու ժամուայ մէջ սեղանի վրա կազմուեց ամէն սեսակ ոսկեղէն զարդերի մի չքեղ բլուր: Այդ ամենը ամփոփուեց արկղի մէջ եւ կնքուեց: Հանգանակութիւնը շարունակուեց դուրսն էլ երեք օր: Հանգանակութեան մասնակցեցին 400 հոգի:

Մի քանի օր յետոյ, նոյեմբեր 28-ին, աւելի մեծ հանդիսաւորութեամբ բացուեց Անկախութեան փոխառութիւնը, որ հասարակութեան կողմից ընդունուեց աննկարագրելի խանդավառութեամբ:

Հանդէսից առաջ եկեղեցում տեղի ունեցաւ Հանրապետական մաղթանք, որից յետոյ ճառեր խօսեցին Սէրհատեան քահանան, Հ. Մ. Արզար կաթոլիկ երէցը եւ դր. Յ. Ստեփանեանը, որոնք երեքն էլ ծանրացան Հայաստանի տնտեսական վերածնութեան վրա եւ սրտառուչ հրաւէր կարդացին, մասնակցելու հանգանակութեան: Բուն հանդէսը տեղի ունեցաւ Հայ Ակումբում, որի զարդարուած պատերի վրա կախուած էին մակագրութիւններ՝ «Մասնակցեցէք ներքին փոխառութեան», «Ոսկու Ֆոնդին», «Պահպանենք մեր անկախութիւնը», «Ամօթ դասալիքներին»: Իշխանի ոգեւորուած ճառից յետոյ բացուեց փոխառութիւնը որ անցաւ փայլուն յաջողութեամբ:

Թէ փոխառութեան ու «Ոսկու Ֆոնդ»-ի գործը կազմակերպելու եւ թէ, առհասարակ, գաղութին այցելութիւն տալու նպատակով, 1920 թ. դեկտ. 4-ին, Իշխանը պ. Աւ. Տէր-Գրիգորեանի հետ դուրս եկաւ շրջելու հայարնակ քաղաքները եւ նոյն օրը երեկոյեան հասաւ Ղազւին, ուր յաջորդ օրը նշանակուած էր փոխառութեան եւ «Ոսկու Ֆոնդ»-ի հանգանակութեան բացման հանդէսը: Հայաստանում կատարուած փոփոխութիւնների մասին արդէն լուր ունէր եւ խիստ տխուր էր, բայց հաւատում էր, թէ այդ ժամանակաւոր վիճակ է եւ շուտով անկախութիւնը կը վերականգնուի:

Փոխառութեան եւ «Ոսկու Ֆոնդ»-ի գործը Ղազւինում էլ անցաւ մեծ յաջողութեամբ: Տեղի ունեցան սրտաշարժ տեսարաններ: Անմոռանալի է, մանաւանդ, Սալմաստի գաղթական պառաւ Դիլբարի պատկերը: Մօտենալով Իշխանին՝ նա ասաց. «Պարոն Երեւանդ, զատ չի մնացիր, Թալնւանք. կօ մնացիր է էս նշանիս մատնիքը. պախիր էմ էր մինուճար տղիս խարսի խըմար.էն էլ Աստուած շատ տըսաւ. փա՛ռք ուրը, գաղթի ճամբախին սպանւաւ. զինւոր էր. մկա էս հանդէսը իմ լաճի խարնիսն է, ես էլ կօ էս մատնիքը տաս էմ: Աստուած դուշմանի ումրը քակի, տունը աւրի, հայի սուրը կտրուկ անի»: Ու դողդոջուն ձեռքով մատից հանելով մատանին՝ դրեց սեղանի վրա: Բոլորի աչքերը լեցուած էին արցունքներով...:

A.R.A.R.@

Ղազվինից Իշխանը անցաւ Համադան: Նոյն ոգեւորութիւնը եւ այստեղ: Իշխանին մեծ աջակցութիւն ցոյց տուեց յայտնի վաճառական Հայկազ Գուլումճեանը, որ իր ընտանիքի իւրաքանչիւր անդամի անունով ստորագրեց 10,000 թուման փոխառութեան եւ 1000 թուման էլ դրեց Իշխանի անձնական տրամադրութեան տակ:

Համադանից Իշխանը ստիպուած եղաւ վերադառնալ Թեհրան:*) Հայաստանի մասին աւելի եւ աւելի մտահոգիչ լուրեր էին հասնում: Հաղորդում էին մեծ մասամբ Ատրպատականի առաջնորդ Ներսէս սրբազանը եւ Մուշեղ Տէր Զաքարեանը: Այս վերջինը պարսից արտաքին գործոց նախարարութեան 20 հոկտեմբեր պաշտօնագրով ճանաչուած էր Հայաստանի Հանրապետութեան Թաւրիզի հիւպատոսական գործակալ: Սեւրի դաշնագրի ստորագրութեան լուրը առնելուց յետոյ, Իշխանը յաջորդաբար առաջարկեց ինձ, ապա Կենտրոնական դպրոցի տեսուչ Կար. Պիոնեանին՝ ստանձնել Թաւրիզի հիւպատոսի պաշտօնը: Մեր մերժումի վրա, պ. Զիրր. Բուդաղեանի հետ համախորհուրդ նոյն առաջարկութիւնը արաւ պ. Մ. Տէր Զաքարեանին, որ Թաւրիզում ծանօթ անձնաւորութիւն էր, գիտէր եւրոպական լեզուներ եւ յարաբերութեան մէջ էր հիւպատոսական շրջանների հետ: Պ. Զ. Բուդաղեանի պնդումով նա ընդունեց իրեն յանձնուած պաշտօնը, բայց տեղեկութիւններ հաղորդելուց զատ ուրիշ որեւէ գործ չկատարեց:

Թեհրանում Իշխանը կացութիւնը գտաւ բոլորովին փոխուած: Մի կողմից նրան սպասում էր խորհրդային կոմիսար Ասք. Մռաւեանի հեռագիրը իրեն եւ պարսիկ արտ. գործոց նախարարութեան, որով յայտնում էր Իշխանի պաշտօնանկութիւնը եւ կարգադրւում էր դեսպանատան թղթերն ու գոյքերը յանձնել ռուսական ներկայացուցչութեան. այս հրահանգը Իշխանը թողեց անհետեւանք: Միւս կողմից, Թաւրիզի գործակալի միջոցով, եկել էր հետեւեալ ծածկագիր հեռագիրը. «Թեհրան, Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Իշխան Արղութեանին. Պետական ծախսերը կրճատելու նպատակով նախարարների խորհուրդը որոշեց վերացնել մի շարք արտասահմանեան միսիաներ, որոնց շարքում նոյնպէս Թեհրանինը. խնդրում եմ միսիան հաշուեյարդարի ենթարկել եւ ամբողջ կազմով վերադառնալ Երեւան, յանձնելով գործերը համապատասխան անձնաւորութեան տեղացիներից իբրեւ պատուաւոր ներկայացուցչի, պայ-

*) Կառավարութեան հրահանգով Պարսկաստանում գործը լրացնելուց յետոյ, Իշխանը պիտի անցնէր եւ Իրաք ու Հնդկաստան փոխառութեան եւ «Ոսկու Ֆոնդ»ի հանգանակութեան համար:

մանով որ պետական դանձարանից օժանդակութիւն չստանայ: № 6747, նոյեմբեր 27. Արտաքին գործոց նախարար Ս. Վրացեան»:*)

Այս կարգադրութիւնը արւած էր Հայաստանի խորհրդայնացումից առաջ. խորհրդայնացումը հիմնովին փոխում էր կացութիւնը: Իշխանը որոշեց մնալ իր պաշտօնում եւ շարունակել դիւանագիտական գործունէութիւնը, ինչպէս արին եւ միւս ներկայացուցիչներն ու Փարիզի պատուիրակութիւնը:

Նա անհետեւանք թողեց և դեկտեմբերի վերջերը Երեւանից ստացւած Հայաստանի Յեղկոմի նախագահ Ս. Կասեանի հետեւեալ հեռագրական հրահանգը. «Յեղափոխական Կոմիտէի որոշման համաձայն դաշնակցական կառավարութեան կողմից նշանակւած բոլոր ներկայացուցիչները կորցնում են իրենց լիազօրութիւնը եւ գործերը պէտք յանձնեն նոր ներկայացուցիչների»: Այս հեռագրից յետոյ Հ. Հ. դեսպանութիւնը իր դիրքը ձեւակերպեց հետեւեալ որոշումով. «ձեռնպահ մնալ ստեղծւած դրութեան հանդէպ եւ սպասել դէպքերի զարգացման, ընդունելով, որ սովետական բեժիմի մուտքը Հայաստանում արդիւնք է ստեղծւած տնտեսական եւ քաղաքական նոր պայմանների: Մինչեւ այդ, սկսւած փոխառութեան եւ ոսկու Ֆոնդի գործը շարունակել նախկին եռանդով եւ աշխատել վերջացնել մինչեւ փետրւարի վերջը. մինչեւ այդ՝ դրութիւնը կը պարզւի եւ կորոշւի մեր դիրքը»:

Այս որոշումը, 1921 թ. յուն. 4-ին, Իշխանը ծածկագիր հեռագրով հաղորդեց Թաւրիզի գործակալ Մուշ. Տէր Զաքարեանին՝ պատուիրելով նախկին ձեւով շարունակել աշխատանքները:

Այս որոշման հետեւանքով, Իշխանը վերսկսեց իր ընդհատւած ճանապարհորդութիւնը եւ մեկնեց դէպի Նոր-Ջուղա, ուր հասաւ շաբաթ օր, յուն. 14-ին:

Նոր-Ջուղան տօնական կերպարանք էր առել: Վաղ առաւօտից

*) Այս որոշումը կառավարութիւնը տւել էր ոչ միայն մի շարք ներկայացուցչութիւնների, այլեւ Փարիզի պատուիրակութեան համար: Պատճառը նախ դրամական էր. թէ պատուիրակութիւնները եւ թէ ներկայացուցչութիւնները իրենց շռայլ ծախսերով շատ ծանր էին նստում Հայաստանի վտիտ գանձարանի վրա: Բայց կար եւ քաղաքական պատճառ՝ լուրջ դժգոհութիւններ Փարիզի պատուիրակութեան եւ որոշ ներկայացուցիչների գործունէութեան դէմ: Ենթադրւում էր կառավարութեան հակակշիռը աւելի ուժեղացնել եւ անմիջական դարձնել: Պատուիրակութեան վերաբերմամբ կար եւ այն պարագան, որ Սեւրի դաշնագրի ստորագրութեամբ, նա իր պաշտօնը լրացրել էր եւ պէտք է փոխարինւէր դեսպանով.- նախորդ կառավարութիւնը նրան արդէն կանչել էր Երեւան: ԽՄԲ.

սկսած ժողովուրդը եռ ու զեռի մէջ էր։ Ազգային մարմիններ, ակնառոր անձինք կառքերով եւ ինքնաշարժերով շտապում էին դէպի վերին կայարանը։ Ամբողջ ճանապարհը բռնուած էր հոծ բազմութեամբ։ Նահանգապետը ներկայացուցիչի հետ ուղարկել էր իր շքեղ փակ կառքը 50 ձիաւորներով, ինչպէս նաեւ մի քանի «եղաքներ»։*) Սպահանից Զուղա տանող ամբողջ ճանապարհի վրա կանգնեցուած էին պահակ ոստիկաններ՝ հսկելու համար կարգապահութեան վրա։

Ժամը 2–ին հասաւ Իշխանը եւ ընդունուեց խանդավառ ցոյցերով։ Մի ժամ Բաղաղա այգում հիւրասիրուելուց եւ հանդստանալուց յետոյ, նա, շրջապատուած կառավարական ներկայացուցիչներով ու պահակախումբով, ազգային մարմիններով ու ոգեւորուած բազմութեամբ, շարժուեց դէպի Սբ. Ամենափրկիչ վանքը, որ շքեղ զարդարուած էր պարսկական եւ հայկական դրօշակներով, գորգերով ու կանաչով։ Վանքի դրան վրա խոշոր տառերով գրուած էր. «Բարի գալուստ անդրանիկ ներկայացուցչին»։

Երբ թափորը մօտեցաւ վանքին, զանգերը սկսան մեղմօրէն հնչել։ Թեմական առաջնորդ Սահակ Եպ. Այվատեանը, հեգեւորականութեան գլուխն անցած, հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տուեց Հայաստանի դեսպանին։ Երկու բարձրաստիճան անձնաւորութիւններ կողք կողքի, շրջապատուած անհաշիւ բազմութեամբ, բուռն ծափերի եւ «կեցցէ»–ների տարափի տակ, անցան վանքի բակը, ուր կարգով շարուած էին ազգային դպրոցի սանուհիներն ու հայ արիները եւ օդը թնդացնում էին ազգային երգով –

Մեր Հայրենիք, ազատ, անկախ...

Երգ ու «կեցցէ»–ներ, զանգերի զողանջ, բորբոքուած բազմութեան խանդավառ ծափեր ու բացականչութիւններ... Անմոռանալի վայրկեաններ։

Դեսպանը առաջնորդուեց տաճարը, ուր տեղի ունեցաւ հանդիսաւոր մաղթանք «վասն Հանրապետութեան Հայաստանի»։ Մաղթանքից յետոյ, վանքի նախագաւթում Իշխանը մի քանի խօսքով շնորհակալութիւն յայտնց կառավարութեան եւ հայ հասարակութեան, խրախուսանքի խօսք ուղղեց արիներին եւ «ուռա»–ներով ու «կեցցէ»–ներով առաջնորդուեց Առաջնորդարանի ընդարձակ դահլիճը, ուր թեմի կողմից առաջնորդ Սահակ Եպ. Այվատեանը, իսկ Նոր–Զուղայի հասարակութեան կողմից Յար.Յորդանանեանը բարի գա-

*) Զարդարուած չիներ։

ԻՇԽԱՆԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՆՈՐ ՋՈՒՂԱ, ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔՈՒՄ

A.R.A.R.@

լուստի խօսք ուղղեցին Հայաստանի անդրանիկ դեսպանին: Իշխանը պատասխանեց զգացած մի ճառով, որով ջատագովեց Հայաստանի Հանրապետութիւնը եւ նրա ծնունդ տուող հերոսներին:

Նոր-Ջուղայում Իշխանը մնաց 17 օր: Այդ ամբողջ ժամանակը անցաւ այցելութիւններով ու փոխայցելութիւններով, հանդէսներով ի պատիւ դեսպանի կամ փոխառութեան ե«Ոսկու Ֆոնդ»-ի հանդանակութեան համար: Նոր-Ջուղայի բնակչութեան համար տօնական օրեր էին դրանք, որոնց յիշատակը երբեք չի ջնջւի նրանց մտքից:

Յունուար 17-ին (հին տոմարով 4-ին) տեղի ունեցաւ Ամանօրի հանդէսը, որ յետաձգւած էր ի պատիւ Հայաստանի ներկայացուցչի: Երկու փառահեղ դէմքեր՝ Առաջնորդն ու Իշխանը գրաւել էին պատուաւոր աթոռներ: Հասարակութիւնը ապրեց անմահ յուզումի ու ոգեւորութեան ժամեր:

Յունու· 21-ին, Ազգային Կենտրոնական Դպրոցի ընդարձակ սրահում ի պատիւ Հայաստանի դեսպանի տեղի ունեցաւ գրական երեկոյթ ուր եւ բացւեց Անկախութեան Փոխառութիւնը: Ջուղայի հասարակութեան մէջ առաջ էր եկել մի մտայնութիւն, թէ քանի որ Հայաստանը զարձել է խորհրդային, փոխառութիւնն այլեւս աւելորդ է: Իր ճառում դլխաւորապէս այդ մտայնութեան վրա ծանրացաւ Իշխանը եւ համոզեցուցիչ փաստերով ցոյց տուեց փոխառութիւնը շարունակելու անհրաժեշտութիւնը:

Նոյն մտայնութեան դէմ բուռն կերպով արտայայտւեց եւ պ· Արամ Երեմեանը, որ հայ ժողովրդի երկաթէ կամքի եւ հայ քաջարի բանակի զովքը անելով՝ յորդոր կարդաց ոյժ տալ փոխառութեան, որ աւելի հաստատուն հիմքերի վրա պիտի դնէ մեր պետութիւնը: Խօսքը ուղղելով Հայաստանի անկախութեան սպառնացող ուժերին՝ բոլշեւիկներին ու Թուրքերին, նա բացականչեց· «Այսօր օրն է մեր հերոսութեան, մեր պատմութեան· այսօր է, որ ցոյց պէտք է տանք մեր նամարդ դահիճներին մեր բազուկները, մեր երկաթէ կամքը, մեր մուրճերն ու հարւածները»:*)

Երեք քառորդ ժամ տեւող ընդմիջոցումի ժամանակ բացւեց փոխառութեան արձանագրութիւնը, որ տւեց 5000 դոլար**) Ապա հանդէսը շարունակւեցաւ նոյն թափով: Երգ, արտասանութիւն, ճառ: Վերջին խօսքը ասաց առաջնորդ Սահակ Եպ· Այվատեանը:

---

*) «Այգ», 1921 թ· № 5, ուր զետեղուած է հանդէսի նկարագրութիւնը եւ սղագրւած ճառերը:

*) Փոխառութիւնը շարունակւեց եւ դուրսը:

Յունս. 23–ին, ցերեկը, ի պատիւ Իշխանի հայ արիների մարզական հանդէս տեղի ունեցաւ Կենտրոնական Դպրոցում: Իսկ երեկոյեան, Առաջնորդարանում Նոր–Ջուղայի հայութեան կողմից տրուեց հանդիսաւոր հացկերոյթ, 90 հոգու մասնակցութեամբ եւ Ցար. Յորդանանեանի սեղանապետութեամբ:

Ի պատիւ Իշխանի թէյասեղան տրուեց ազգային երկսեռ դպրոցների մանկավարժական խորհրդի, ինչպէս եւ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան կողմից:

Յունս. 28–ին Կարմիր Խաչի Միութիւնը ի պատիւ Իշխանի ներկայացրեց «Անոյշ» օպերան:

Իշխանը ամբողջ ժամանակ շրջապատուած էր ընդհանուր սիրով ու գուրգուրանքով: Ջուղայի հայութիւնը մեծ ջերմութեամբ ընդունեց ու պահեց իր մէջ Հայաստանի դեսպանին. նոյնպիսի խանդավառութեամբ ու ցոյցերով էլ ճանապարհ դրեց: Իշխանը մեկնեց՝ խոստանալով յաջորդ տարի օգոստոսին վերադառնալ եւ Այվազեան Արքեպ.–ի հետ մեկնել Հնդկաստան նոյն առաքելութեամբ:

XII

ԴԵՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ.

Թեհրանում Իշխանին յուսահատական լուրեր էին սպասում: Հայաստանից մռայլ տեղեկութիւններ էին հասնում – բոլշեւիկեան վայրագութիւններ, բանտարկութիւն ու գնդակահարութիւն, սով եւ յարաճուն դժգոհութիւն ժողովրդի մէջ: Պարսկահայութիւնը ենթարկուած բարոյալքման-պղտոր ջրի մէջ ձուկ որսալու սովոր տարրերը սկսել էին գլուխ բարձրացնել. մինչեւ այդ դեղին գոյնով ծածկուածները կարմրում էին: Անկայուն էր կացութիւնը եւ Պարսկաստանի կեանքում. իրար յաջորդող կառավարութիւնները չէին կարողանում հաւասարակշռել պետութեան ներքին եւ արտաքին վիճակը:

Թեհրանում Իշխանը գտաւ ընդհանուր յուսալքում. փոխառութիւնը եւ «Ոսկու Ֆոնդ»–ի հանդանակութիւնը կանգ էին առել. կառավարութեան հետ սկսուած բանակցութիւնները ընդհատուել էին. այլեւս խօսք չէր կարող լինել փոստ – հեռագրական կամ առեւտրի դաշնագրի մասին: Դադարել էր եւ Թաւրիզի գործակալութեան՝ պ. Մ. Տէր–Զաքարեանի գործունէութիւնը: Նրա բնակարանի վրա տնկուած երկար փայտի վրա երբեք չծածանեց հայկական եռագոյնը: Ինքն էլ վախի մէջ էր, թէ շուտով ստիպուած պիտի լինի միւս հիւպատոսների հետ հեռանալ Թաւրիզից, որ գտնուում էր բոլշեւիկների

ԻՇԽԱՆԸ ՀԱՅ ԱՐԻՆԵՐԻ ՄԷՋ, ԶՈՒՂԱՑՈՒՄ

սպառնալիքի տակ: Ատրպատականի առաջնորդարանն էր միայն, Ներսէս Արքեպ· Մելիք Թանդեանը, որ լուռ ու մտախոհ, բայց անընկուն կամքով, շարունակում էր իր պատասխանատու աշխատանքը եւ օրը օրին տեղեկացնում Իշխանին ստացուող նորութիւնների մասին:

Մի օր էլ լուր հասաւ, թէ Հայաստանի ժողովուրդը ապստամբել է, թէ խորհրդային իշխանութիւնը տապալուած է, թէ Երեւանում նորից վերահաստատուած է ազգային իշխանութիւնը:

Զարմանալի դուգադիպութեամբ, ճիշտ նոյն միջոցին պատմական մեծ յեղաշրջում տեղի ունեցաւ եւ Պարսկաստանում· փետր· 22–ին, մի հզօր կամքի տէր գնդապետի վերջնագրով – որ յետոյ պիտի դառնար Պարսկաստանի վերանորոգիչ – Շահ Կաջարին արտակարգ լիազօրութիւններ տալով վարչապետ նշանակեց Սէյիդ Զիաէդդին Թաբաթա Բային, և այդ օրւանից Իրանը բռնեց վերածնութեան ճանապարհը:

Վարչապետ Սէյիդ Զիաէդդին, փոխայցելութեան գալով Հայաստանի դեսպան Իշխանին, ջերմ խնդակցութիւն արտայայտեց Հայաստանի ազատութեան առթիւ եւ պատրաստակամութիւն յայտնեց աջակցելու հայ ժողովրդին բոլշեւիկների դէմ մղած պայքարում:

Հայաստանի դեսպանութեան եւ պարսիկ կառավարութեան միջեւ վերականգնուեցին պաշտօնական յարաբերութիւնները: Պարսիկ կառավարութիւնը ամէն կերպ ընդ առաջ էր գնում Իշխանի դիմումներին եւ միշտ համակրական վերաբերում ցոյց տալիս Հայաստանին ու հայ ժողովուրդին:

Հայաստանից ստացուող լուրերը, սակայն, երկար ժամանակ անորոշ էին: Միակ աղբիւրը՝ եւրոպական հեռագրական գործակալութիւններն ու պարսիկ կառավարութիւնը այնքան էլ շատ բան չգիտէին Հայաստանի ներքին վիճակի մասին: Կացութիւնը վերջնականապէս պարզուեց միայն մարտ 13–ին, երբ ստացուեց Հայաստանի նոր կառավարութեան նախագահ Ս· Վրացեանի ընդարձակ հեռագիրը Զեչերինին եւ «բոլորին , բոլորին, բոլորին»: Այդ հեռագիրը ցրեց բոլոր կասկածներն ու տատանումները եւ վճռականապէս հաստատեց, որ Հայաստանը նորից անկախ է:

Նորից բարձրացաւ պարսկահայ ժողովրդի տրամադրութիւնը: Խանդավառութիւնը մեծ էր ամէն տեղ: Հայ ժողովուրդը, կարծես, նոր կեանք, նոր հոգի ստացաւ: Թէ պատմական ինչ խոշոր դէպք էր Հայաստանի փետրուարեան ապստամբութիւնը, կարելի է դատել

A.R.A.R.@

նրա գործած հզօր տպաւորութիւնից պարսկահայ ժողովրդի տրամադրութեան վրա:

Աւա՜ղ, սակայն, նոր ազատութիւնը երկար չտեւեց: Երբ ես Ղազւինի գաղթականութեան հետ, ամբողջ 26 օր ճանապարհորդելուց յետոյ, մայիս 21-ին հասայ Թաւրիզ, կաթւածահարի պէս, մեծ վշտով ու դառնութեամբ դտայ այնտեղ Հայաստանից եկած տարագիրներին՝ նախարարներ, խորհրդարանի անդամներ, պաշտօնեաներ, զինուորներ: Պարզ էր՝ հայ ժողովուրդը չէր կարողացել դիմանալ տրտաքին թշնամի ուժերի զրոհին եւ տեղի էր տուել... Նրա վերջապահ մասերը դեռ պայքարում էին Լեռնահայաստանում, բայց սրանց պարտութիւնն էլ օրերի խնդիր էր...

Քիչ յետոյ, յունիսին, եկաւ նոր Հայաստանի հիւպատոս «ընկեր Երզնկեանը»: Անշուք եւ անփառունակ ներկայով մտաւ Թաւրիզ, բաց տրաւ «հիւպատոսարանը» եւ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսական գործակալ Մուշեղ Տէր-Զաքարեանից ստացաւ միայն մերկ մնացած դրօշակի փայտը, որի վրա պարզեց բոլշեւիկեան դրօշը:

Իսկ Թեհրանում, դեռ բաւական երկար ազգային դրօշը ծածանւում էր Հայաստանի դեսպանատան գլխին: Իշխանը յուսահատ չէր: Ռուսաստանի ներքին խռովութիւնները մի կողմից, Կովկասում տեղի ունեցող շարժումները, արտաքին աշխարհի թշնամական վերաբերումը բոլշեւիկներին, յոյն – տաճկական պատերազմը, դէպքերը Զանգեզուրում – այդ բոլորը նրա աչքին յուսատու երեւոյթներ էին: Նա հաւատում էր, թէ Հայաստանը նորից կը վերագրաււի եւ Հայկական Անկախութիւնը նորից կը վերականգնի: Այդպէս էր համոզած պարսկահայ ժողովուրդը, որ սրտատրոփ լուրերի էր սպասում:

Իշխանի աշխատանքներն այդ օրերին կենտրոնացած էին գլխաւորապէս գաղթականների խնդրի վրա՝ Բասրայից սկսած մինչեւ Ատրպատական: Հոծ գաղթականութիւնը՝ զրկուած անգլիական նպաստից՝ անելանելի կացութեան մէջ էր: Ամէն կողմից օգնութեան սրբտակեղեք աղաղակներ էին հասնում: Իշխանը անվերջ բախում էր անգլիացիների, Ամերիկեան նպաստամատոյցի դռները, ինչպէս եւ հեռագրում էր Փարիզ, Պատուիրակութեան: Այդ դիմումները տուին որոշ արդիւնք, եւ գաղթականութեան վիճակը մասամբ մեղմացաւ:

1921 թ. ամառը, ըստ սովորութեան, դեսպանատունը փոխադրուեց ամառանոց, ուր Հայաստանի դրօշը շարունակում էր ծածանուել դեսպանատան վրա: Երբ աշնանը Իշխանը վերադարձաւ մայ-

բաքաղաք. այլեւս Սէյիդ-Զիաէդդինին յաջորդել էր նոր վարչապետ Ղաւամ – Սալթանէն: Պարսիկ կառավարութիւնը շատ քաղաքավարի կերպով հասկացրեց, թէ դրօշակ պարզելն այլեւս անյարմար է, քանի որ Հայաստանը, դժբախտաբար, կորցրել է իր անկախութիւնը: Մի սարսափելի հարուած, որ Իշխանին խոցեց մինչեւ հոգու խորը: Այդ օրը սուգի օր էր նրա համար: Եւ ոչ միայն նրա. ամբողջ պարսկահայութիւնը ողբում էր հայրենի անկախութեան կորուստը:

Այնուհետեւ համակ ցաւ ու տառապանք եղաւ Իշխանի կեանքը: 1922 թ. Թեհրան եկաւ խորհրդային Հայաստանի «դիւանագիտական ներկայացուցիչ» Լեւոն Սարգսեանը, որ հէնց առաջին օրից կրքոտ թշնամական դիրք բռնեց Իշխանի հանդէպ: Իշխանը անտեսեց նրա պահանջները եւ ոչինչ չյանձնեց դեսպանատան գործերից: Սարգսեանը դիմեց պարսիկ արտաքին գործերի նախարարութեան եւ սրա միջնորդութեամբ մի քանի անկարեւոր թղթեր ստացաւ Իշխանից:

Իշխանը շտապեց հաշուեյարդարի ենթարկել դեսպանութեան գործերը. «Ոսկու Ցոնդ»-ի եւ փոխառութեան գումարների մի մասը վերադարձուեց ստանալ ուզող տէրերին, իսկ մնացածը ուղարկուեց Հայաստան՝ սովեալներին սնունդ եւ գիւղացիներին լծկան բաժանելու համար: Հնարաւոր վախճանին հասցրեց նաեւ գաղթականների օգնութեան գործը: Ապա ընտանիքով մեկնեցաւ Եւրոպա:

Մեր սրբազան Հայրենիքի անկախութիւնը, Հանրապետութեան կառավարութիւնը, Հայաստանի անդրանիկ դեսպանը Պարսկաստանում մի – մի փայլող, շողշողուն աստղ էին հայ ժողովրդի դարերով տառապած կեանքի մռայլ երկնակամարի վրա: Այդ աստղերը երեւացին, բոցավառուեցին ու կարճատեւ փայլից յետոյ նորից անհետացան: Մենք համոզուած ենք, սակայն, որ նրանք նորից պիտի երեւան աւելի տեւական եւ պայծառ լոյսով լուսաւորելու համար մեր հայրենի երկնակամարը: Ներկայ տողերը աղօտ արձագանգն են այն փայլուն ու խանդավառ, աւա՜ղ, այսօր այլեւս երազ դարձած օրերի, որով մի պահ ապրեց ու ոգեւորուեց պարսկահայ ժողովուրդը:

Թաւրիզ. (Վերջ)